ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Տաթևիկ Մկրտչյան[1]

ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ

Բանալի բառեր՝ *Իմամ Ալի, Մալիք ալ-Աշթար, Նահջ ալ-բալաղա, արդար կառավարում, բարեպաշտություն, աստվածավախություն*

Այս հոդվածում քննարկվում է Նահջ ալ-բալաղա[2] ժողովածուում հավաքագրված նամակների բաժնում տեղ գտած Իմամ Ալի իբն Աբի Տալիբի (մահ. 660/1թ.) ուղերձ-նամակն ուղղված Եգիպտոսի կառավարիչ Մալիք ալ-Աշթարին (մահ. 657թ.)։ Կարևոր է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ այս աշխատությունը և մասնավորապես այս ուղերձ-նամակը վերագրվում է Ալի Իբն Աբի Տալիբին և գրի է առնվել տասնչորս դար առաջ, այն այսօր էլ արդար կառավարման կարևոր ուղեցույց է հանդիսանում և արդիական է նաև մեր օրերում։

Նահջ ալ-բալաղան, որը արաբերենից թարգմանաբար նշանակում է «ճարտասանության արվեստ» արդարակյաց չորրորդ խալիֆ և շիայական առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբի *խուտբաների* (թվով 241 քարոզ, ճառ, հրահանգ), *ռասաիլների (*թվով 79 ուղերձ-նամակների*) և հիքմաների* (թվով 480 ասույթների և իմաստուն խոսքերի) ժողովածու է, որը հավաքագրվել է Բուիների դարաշրջանում շիայական հայտնի աստվածաբան և կրոնագետ ալ-Շարիֆ ալ-Ռադիի (970-1015/16) կողմից։ Նահջ ալ-բալաղա ժողովածուն կարևոր դեր և նշանակություն ունի

---

[1] ԵՊՀ արաբագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ tmkrtchyan@ysu.am

[2] Մեր ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք Նահջ ալ-բալաղայի հետևյալ հրատարակությունից نهج البلاغة من كلام أمير المؤمنين أبي الحسن عليُّ بن أبي طالب عليه السلام/و هو ما اختاره الشريف الرضي.قم: أنصاريان، 2004، ص . 653. (Այսուհետ՝ نهج البلاغة ، 2004):

մուսուլմանական ավանդույթի և հատկապես շիաների համար: Շիայական կրոնափիլիսոփայական դավանաբանության հիմքում ընկած է այն միտքը, որ իմամների խոսքերը և իմամությունը՝ որպես Մուհամմադ մարգարեի միջոցով Ալլահից ստացված ուղերձներից՝ Ղուրանից՝ Ալլահի ուղղորդած ճանապարհից հետո երկրորդ «հեղինակավոր խոսքը և ճանապարհն է»: Ինչպես նշում է Լիյաքաթ Թաքիմը՝ «Մուհամմադ մարգարեի արժանիքները տեսանելի են Ալիի մեջ որպես հայելային պատկեր»[3], իսկ Նահջ ալ-բալաղան էլ համարվում է «Ղուրանի ժառանգ»[4]:

Նահջ ալ-բալաղան որպես կրոնական և գրական ժառանգության մի գլուխգործոց շատ արժեքավոր է թե՛ բովանդակությամբ, և թե՛ ձևով ու ոճով: Այս ամբողջ աշխատությունն Ալի իբն Աբի Տալիբի և ինչու չէ նաև հավաքագրող հեղինակ ալ-Շարիֆ ալ-Ռադիի ժամանակաշրջանում Ալլահի, մարդու և աշխարհի ընկալման և իմացության աստիճանի մասին է վկայում, իսկ ոճական առումով այն ցուցադրում է իր արժեքավորությունը ճարտասանության արվեստում:

Այս աշխատության համար ճարտասանությունը, որպես հավաքագրման հիմք ընդունելով, հավաքագրող հեղինակ ալ-Շարիֆ ալ-Ռադին Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութը երեք ժանրային բաժանման է ենթարկում՝ քարոզների, ուղերձ-նամակների և իմաստնությունների[5]: Այս հոդվածում մանրամասն չենք քննարկելու ուղերձ-նամակների՝ նամակագրության ժանրային առանձնահատկությունների և դրանց դերի ու նշանակության կարևորությունը հատկապես վաղիսլամական

[3] Liyakat Takim, "Spirituality in the Nahj al-Balagha", available at: http://www.ltakim.com/Nahj%20al-Balagha.pdf, (մուտք՝ 10.05.2021).
[4] Murtada Mutahhari, "Glimpses of the Nahj al-Balaghah", Kindle Edition.
[5] Հավաքագրման հարցի մանրամասն քննարկումը տե՛ս՝ Տաթևիկ Մկրտչյան, Nahǧ al-balāġa-ի հավաքագրման, վերնագրման, բովանդակության ընտրության և կառուցվածքային որոշ հարցերի պարզաբանումը՝ ըստ հավաքագրող-հեղինակ ալ-Շարիֆ ալ-Ռադիի նախաբանի, *Արևելագիտության հարցեր*, 11, Երևան, 2016թ. էջ 50-65:

ճարտասանության արվեստի մեջ, քանի որ այդ թեմային արդեն նվիրված հոդված է հրատարակվել[6]: Պարզապես փորձենք հասկանալ ալ-Աշթարին ուղղված նամակ-ուղերձի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, կառավարման, աստվածավախության և բարեպաշտության ինչպիսի ուղերձներ է այն հղում սերունդներին:

Նամակագրությունը համարվել և համարվում է իմաստային համակարգի կարևորագույն մեթոդներից մեկը, որն էլ ճարտասանության արվեստի կարևորագույն տարրերից է: Տեքստի ֆունկցիան՝ գործառույթը բնորոշվում է իր սոցիալական/հասարակական դերով, տեքստը ստեղծող կոլեկտիվի որոշակի պահաջմունքների բավարարման կամ սպասարկման հնարավորությամբ: Այս նամակը թեև ունի հասցեատեր, և դա Մալիք ալ-Աշթարն է, բայց այն ուղղված է ոչ ուղղակիորեն, բազմաթիվ հասցեատերերի՝ հասարակ մարդկանց, մեծ ու փոքր վարչական կառավարիչների, ծառայողների, մարդկանց տարբեր շերտերի, բանակի հրամանատարությանն ու ծառայողներին, դատավորներին, դատական համակարգին, վարչական ադմինիստրատիվ կառուցվածքային միավորներին, առևտրականներին, աղքատներին և հարուստներին, ճնշվածներին և ճնշողներին, և որ ամենակարևորն է Ալլահի միակության և անգերազանցելիության, նրան առանց քննելու ապավինելու և հիշելու, որ յուրաքանչյուր մարդու ամեն րոպեն միայն և միայն Ալլահի համար է: Շատ հետաքրքրական է, որ այս նամակում կան բազմաթիվ կարճ նախադասություններով արտահայտված արժեքավոր հրահանգներ, որոնք իրենց իմաստային բեռնվածքով և կառուցվածքով ամբողջությամբ համապատասխանում են Ալիի

[6] Տաթևիկ Մկրտչյան, Nahǧ al-balāġa-ի ուղերձ-նամակների կառուցվածքային և բովանդակային ռանձնահատկությունների շուրջ, *Արաբագիտական ուսումնասիրություններ*, 10, Երևան, 2018թ. էջ 163-176:

կողմից արտասանված բազմաթիվ իմաստոնություններին, որոնք ալ-Ռադին հավաքագրել է աշխատության երրորդ բաժնում:

Մալիք ալ-Աշթարին ուղղված Ալի իբն Աբի Տալիբի նամակը շատ հարուստ տեքստ է և համարվում է իսլամի վաղ շրջանի կառավարմանն առնչվող բացահայտ և ներքին հրահանգների լավագույն օրինակներից մեկը: Այն իսլամի և մուսուլմանների համար կարևորագույն ուղենիշներ է սահմանում աշխարհայացքային պարադիգմաների և խորհրդանիշների համատեքստում, որոնք առնչվում են Աստծո ճանաչմանը, աշխարհին, կառավարմանը և մարդու ինքնաճանաչողության միջոցով սեփական արարքների համապատասխանեցմանը բարոյական, սոցիալական և կրոնական օրենքներին:

Մինչ անցնենք տեքստի վերլուծությանը համառոտ ներկայացնենք, թե տարբեր հետազոտողներ ինչ մեկնաբանություններ և կարծիքներ ունեն այս նամակի առնչությամբ:

Տարբեր ժամակաշրջաններում այս նամակը բազմաթիվ մեկնաբանությունների է ենթարկվել. մասնագետները նշում են ավելի ուշ դարերի ընթացքում ավելի քան հարյուր մեկնությունների մասին: *Շիայական անտոլոգիա*[7] աշխատության գլուխներից մեկը, որը վերնագրված է որպես «Կառավարիչը և հասարակությունը», մանրամասնորեն անդրադառնում է հենց այս նամակին և դրա մի շարք մեկնություններին՝ Իբն աբի ալ-Հադիդի[8], Իբն Մայսամ ալ-Բահրանիի[9], Մուհամմադ Աբդոյի[10] և այլոց:

---

[7] *A Shi'ite Anthology*, 'Allāmah Tabātabā'ī, trans. by William C. Chittick, Muhammadi Trust of Great Britain and Northern Ireland, 1981, pp 67-90.

[8] Իբն Աբի ալ-Հադիդը (մահ. 1258թ.) հայտնի մութազիլի է, որը Նահջ ալ-բալաղայի կարևորագույն և հսկայածավալ (11 հատոր) մեկնության հեղինակ է: Ibn Abī al-Ḥadīd, Sharḥ Nahj al-Balāgha, vol 1, Cairo (1959-1964):

[9] 20-րդ դարի եգիպտացի ամենահայտնի հրապարակախոս և գիտնական Մուհամմադ Աբդոյի քառահատոր մեկնաբանությունը՝ شرح محمد عبده نهج البلاغة, տե՛ս՝ https://archive.org/details/nahjbalagha/CNB0/mode/1up:

Այս նամակը բազմաթիվ հետազոտողներ համարում են մի յուրահատուկ ուղեցույց, որն առնչվում է իսլամական *վարչարարությանը, առաջնորդությանը, բարոյագիտությանը, աստվածավախությանը և բարեպաշտությանը, հակամարտությունների կառավարմանը, հաղորդակցության հմտություններին, հոգեբանությանը. այս շարքը կարելի է շարունակել:*

Հետազոտող Ռոբերտ Գլիվի կարծիքով, Ալին իր նամակում «ամբողջականացնում է իր պատկերացումները լեգիտիմ և արդարացի կառավարման հարցում» և խորհուրդներ է տալիս Մալիք ալ-Աշթարին որպեսզի վերջինս «իրականացնի Շարիաթը, ոչ միայն որպես սոցիալական վերահսկողության միջոց, այլև որպես կրոնական զարթոնքի ուղի, ինչպես նաև համայնքի հոգևոր բարեկեցության երաշխիք»[11]:

Հեղինակների մեկ այլ խումբ էլ Մալիք ալ-Աշթարի նամակը արաբական հռետորության կարևորագույն նմուշ են համարում՝ հակադրությունների, սեփական ես-ի և մարդկային հատկանիշների քննարկման համատեքստերում[12]: Ալի իբն Աբի Տալիբի ֆենոմենոլոգիական հիմնական նպատակը մարդկային էգոյի մաքրագործումն էր, ժամանակավորի դեմ հավերժականի հաղթանակը. տեսնել Ալլահին, ամբողջական ճշմարտությունը՝ օգտագործելով կրոնական ծիսակարգերը՝ որպես սեփական եսի մաքրագործման ճանապարհ և ուղի:

[10] Ալի Իբն Մայսամ ալ-Բահրանին (մահ.1299/1300) հայտնի շիա հաղիսագետ, աստվածաբան և կրոնագետ է, նրա Շարհ Նահջ ալ-Բալաղա աշխատության հինգ հատորյակը տե՛ս՝ http://alfeker.net/library.php?id=2960 :

[11] Gleave, Robert M. (2008). "Ali ibn Abi Talib". Encyclopaedia of Islam, THREE. Brill Online. Archived from the original on 2 April 2013. Retrieved 29 March 2013.

[12] Ali Tareq, Imam Ali (a.s) & Transcendental Phenomenology: Letter to Malik al-Ashtar as lifeworld system thinking Paradigm, University of Kerbala, 2019, https://www.researchgate.net/publication/330292710_Imam_Ali_as_Transcendental_Phenomenology_Letter_to_Malik_al-Ashtar_as_lifeworld_system_thinking_Paradigm.

Շիայականության բնագավառում հետազոտությունների հարցում մեծ ավանդ ունեցող գիտնական Նորմալ Կալդերը, թեև որոշակի թերահավատություն ունենալով հանդերձ այս նամակի Ալի իբն Աբի Տալիբին պատկանելության հարցում, միևնույնն է այն նկարագրում էր հետևյալ կերպ՝

«…այն անկասկած, նույնիսկ թարգմանությամբ, շատ տպավորիչ ինքնահայեցողական արձակի մի կտոր է, որն արտահայտում է իշխանության համար բարոյական բարձրագույն չափանիշների համախումբը: …օրինակ ալ-Աշթարիին կոչ է արվում արդարության, արդար գործողությունների, ինքնատիրապետման, զսպվածության, ողորմության, սիրո, բարության, ներողամտության և Աստծո վրեժխնդրության և Նրա ներողամտության գիտակցման. նրան հիշեցվում է ենթակաների համար բովանդակությունը ապահովել, թեթևացնել նրանց բեռը և վերացնել ժողովրդի մեջ հաստատված ոչ պատշաճ սովորույթները: …Ամբողջության մեջ այն ուժեղ արտահայտությունն է բարոյականությամբ ուղղորդված սոցիալական անհանգստությունների, որը նույնիսկ թարգմանության ժամանակ չի կորցնում իր փայլն ու արժեքը»[13]:

Գրեթե բոլոր հեղինակները համարում են, որ այս նամակը տալիս է իրական չափորոշիչներ ճշմարիտի և սխալի, իսլամական և ոչ իսլամական օրենքների, լեգիտիմության բոլոր չափումների իրական մոդելներ է ներկայացվում: Համարվում է, որ Իմամ Ալին իր այս նամակով ցույց է տալիս, որ Ղուրանական իսլամում չկան այլոք, մուսուլմանը չունի ներքին թշնամիներ, քանի որ նրանք մարդկանց համարում էին կամ իրենց կրոնի ներսում, կամ էլ իրենց էկոհամակարգի մաս: Նամակի երրորդ գլուխն ամբողջությամբ ցույց է տալիս մարդկանց միմյանց հետ փոխհարաբերություններում միմյանցից կախվածության հանգամանքը: Գլուխը սկսվում է հետևյալ կերպ. «Իմացի՛ր, որ քո

[13] Calder, N., Reviewed Work: *A Shi'ite Anthology* by William C. Chittick, 'Allāmah Tabātabā'ī , Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol. 44, No. 3 (1981), 577.

տարբեր դասերի ենթականերից ոչ մեկը չի կարող միմյանցից առանձին դիտարկվել և նրանցից ոչ մեկն անկախ չէ մյուսից»[14]:

Այժմ փորձենք հասկանալ, թե նամակը, որն ուղղվել է Մալիք Իբն ալ-Հարիս ալ Նախաիին, որը հայտնի է որպես Մալիք ալ-Աշթար անվամբ (*աշթար* թարգմանաբար նշանակում է մարդ, որն ունի շրջված թարթիչներ)։ Նրան այդպես էին կոչում, քանի որ նա վնասվածք էր ստացել Յարմուքի ճակատամարտում (636թ.)[15]:

Ի՞նչ արժանիքներ և բարեպաշտություն ուներ ալ-Աշթարը։ Ալ-Աշթարը նախ *թաբիուն*-ներից (tābiūn)՝ Մուհամմադ մարգարեի զինակիցներին անձամբ ճանաչողների սերունդներից էր՝ դառնալով Ալիի աշակերտը և կռվելով նրա հետ Սիֆֆինի և Ուղտի ճակատամարտներում, փաստորեն վաղ իսլամի տարածման շրջանում հայտնի ռազմիկներից, բանակի կառավարիչներից էր և Ալիի ամենահավատարիմ աջակիցներից։ Այնքան խիզախ է եղել, որ կարողացել է ընդվզել և ճշմարիտն ասել ղեկավարների մասին։

Մալիք ալ-Աշթարը հայտնի է նաև նրանով, որ խորհուրդ է տվել, որ Ալին Սիֆֆինի ճակատամարտում չընդունի Մուավիայի հետ հաշտեցման պայմանագրի ստորագրումը։ Ըստ ավանդույթի՝ նա թունավորվում է ճանապարհին, երբ Օսմանի սպանությունից հետո Ալիի՝ չորրորդ արդարակյաց խալիֆ դառնալուց շատ կարճ ժամանակ անց գնում էր Եգիպտոս (658/659թ.)՝ ստանձնելու Եգիպտոսի կառավարչի իր պաշտոնը։ Նրա լոյալությունն Ալիին, ըստ աղբյուրների, պայմանավորված էր նրանով, որ ալ-Աշթարը համարում էր, որ Ալին այն քիչ մարդկանցից է, որ այնքան հավատքին մոտ է, և հավատարիմ է մնացել իսլամի օրենքներին, որ կկարողանա կառավարել՝ ըստ այդ օրենքների։ Այս նամակի հիմնական նպատակներից մեկը կարծես համարվում է այն, որ

[14] 2004 ، نهج البلاغة էջ 514-515.

[15] Veccia Vaglieri, L., “al-Ashtar”, in: Encyclopaedia of Islam, Second Edition, Edited by: P. Bearman, Th. Bianquis, C.E. Bosworth, E. van Donzel, W.P. Heinrichs.

Ալին ցանկանում էր տարբեր երկընտրանքների պատասխաններ պարունակող իր այս նամակով բոլոր ղեկավաներին զերծ պահել հետագա սխալներից:

Շատ կարևոր է հասկանալ, թե իրականում ինչ պատմական փուլում է ուղարկվել այս նամակը, ինչպիսի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային պայմաններում է այն ակտուալացվել: Տվյալ ժամանակաշրջանն առաջին ուղղահավատ չորս խալիֆների ողջ պատմության ամենից ոչ կայուն, միմյանց դեմ տարբեր հակամարտությունների և ռազմական բախումների կարևորագույն փուլ է եղել: Շատ հետաքրքրական է, որ հենց նման պայմաններում, երբ ուսումնասիրում ենք Իմամ Ալի իբն Աբի Տալիբին վերագրվող նյութը, տեսնում ենք, որ Իմամ Ալին ընդհանրապես համարում է, որ մարդկության արժանիքների բարելավումն այն հենքն է, որի հիման վրա պետք է իրականացնել ումմայի կառավարումը: Ալի իբն Աբի Տալիբը համարում էր, որ միայն մարդու ներհայեցողության պայմաններում է հնարավոր հասնել ներանձնային իրականությանը, ներքին կարգապահության՝ միևնույն ժամանակ վերացնելով քաղաքական, կրոնական և ռասայական սահմանները:

Կառուցվածքային առումով այս նամակը Նահջ ալ-բալաղայի երկրորդ՝ ուղերձ-նամակների բաժնում թվով 53-րդ և ամենաերկար ուղերձն է ժողովածուում:

Այս հրահանգներն ու ուղերձները գրվել են ալ-Աշթարի Եգիպտոսի կառավարիչ նշանակման կապակցությամբ, այն ժամանակահատվածում, երբ Եգիպտոսի կառավարիչ Մուհամմադ իբն Աբի Բաքրը գտնվում էր լուրջ խռովությունների և խառնաշփոթի մեջ: Նամակ-ուղերձը բաղկացած է **նախաբանից**, երկրորդ հատվածը վերնագրված է **«Հրահանգներ և ցուցումներ երկրի կառավարման հարցերում ճշմարիտ գործողությունների իրականացման համար»**, երրորդ մասը վերաբերում է **«Մարդկանց**

դասակարգման հետ կապված խնդիրներին», չորրորդ մասն առնչվում է **«Մալիք ալ-Աշթարի հետաքրքրությունների շրջանակում եղած հրահանգներին և արգելքներին»**:

Նամակը սկսվում է հետևյալ կերպ.

«Ահա թե ինչ է հրամայում Ալլահի սպասավոր, Հավատացյալների էմիր Ալին Մալիք իբն ալ-Հարիս ալ-Աշթարին՝ Եգիպտոսի կառավարչի նրա նշանակման կապակցությամբ՝ հարկերի հավաքագրման, թշնամիների դեմ պայքարի, սեփական ժողովրդի համար բարիքների ձգտման և դրանց հասնելու, և քաղաքները ծաղկուն դարձնելու համար»[16]:

Փաստորեն, նախաբանում արդեն հստակեցվում է, որ Ալի իբն Աբի Տալիբը չորս ուղղություններ է սահմանում Մալիք ալ-Աշթարի համար, երբ նրան նշանակում Եգիպտոսի կառավարիչ. դրանք են՝ **հողային հարկերի հավաքագրում, թշնամիների դեմ պայքար, մարդկանց կյանքի բարելավում և տարբեր շրջանների ծաղկման և բարգավաճման ապահովում**: Այս ամենին զուգահեռ Ալին նրան **աստվածավախության, Ալլահի միակության, նրա հրահանգների աքննելիության և դրանց պարտադիր կատարման, հնազանդության և Ալլահին ապավինելու** հրահանգներ է տալիս:

Նա իր երկրի կառավարման հրահանգները և արդար կառավարիչ լինելուն վերաբերող հրահանգները սկսում է հետևյալ կերպ. *«…Ես քեզ ուղարկում եմ մի վայր, որտեղ քեզնից առաջ մարդիկ տեսել են արդար և ոչ արդար կառավարիչների: Քեզ համար պարտադիր է ուսումնասիրել քեզնից առաջ եղած բոլոր արդար և լավ կառավարիչների սկզբունքները. Նայի՛ր մանրակրկտորեն մեր Մարգարեի, նրա ավանդույթների, և Ալլահի Սուրբ գրքի հրահանգները, ինչպես նաև իմ կողմից արարքները և փորձի՛ր դրանք միասնականության մեջ դիտել»:* Միևնույն ժամանակ նա հրամայել է նրան *«…վախենալ Ալլահից,*

[16] էջ 499-500, 2004 ، نهج البلاغة,

գերադասել Նրան հնազանդվել և հետևել այն ամենին, ինչ Նա պատվիրել է Իր Գրքում՝ Իր պարտադիր և ընտրովի հրամաններից, առանց որոնց հետևելու չի կարելի առաքինության հասնել, ոչ էլ (կարող է) Չար լինել, բացառությամբ եթե հակառակվի և անտեսի այդ պատվիրանները, ապա օգնելու է Փառավոր Ալլահին իր սրտով, ձեռքով և լեզվով, քանի որ Ալլահը, վեհագույն է, և պատասխանատվություն է կրում օգնելու նրան, ով օգնում է Իրեն, և պաշտպանում է նրան, ով աջակցում է Իրեն: Նա նաև հրամայում է նրան կտրել սիրտը կրքերից և զսպել այն դրանց ավելացման պահին, քանի որ սիրտը տանում է դեպի չարություն, եթե Ալլահը ողորմած չէ»[17]:

Իմամ Ալին սրանով Ալլահ-Իմամ փոխհարաբերությունների համատեքստում ցույց է տալիս իր կոռուպցիայից, անարդարությունից, մարդկանց նկատմամբ ճնշումներից և ընդհանրապես բոլոր մեղքերից զերծ լինելու վկայությունը:

Ահա Ալիի կողմից արտասանված ալ-Շարիֆ ալ-Ռադիի կողմից հավաքագրված գրքի անվանումը՝ որը մենք թարգմանում ենք ճարտասանության արվեստ, հատկանշական կերպով արտացոլում է գեղեցիկի շուրջ հեղինակի և հեղինակ հավաքագրողի գրականագիտական տեքստ ստեղծելու նպատակը: Սակայն միայն գեղարվեստական չէ Նահջ ալ-բալաղայի արժեքը, այն ինչպես հեգելյան փիլիսոփայությունն էր ասում փոխադարձ ճանաչողությունների միմյանց ընդունումն է: Նահջ ալ-բալաղայի հիմնական կարևոր առաքելություններից մեկն իրեն լսարանի գիտակցության արթնացումն է, բոլոր մակարդակներում և դեպքերում, օրինակ երբ նա աղոթում էր մզկիթում, երբ նա խոսում էր արարման և հրեշտակների մասին, երբ խորհուրդներ էր տալիս իր որդուն, այլոց, երբ նա նկարագրում էր իր դժվարագույն քաղաքական իրավիճակի մասին, և իհարկե

[17] نهج البلاغة ، 2004, էջ 500.

երբ նամակներ էր գրում իր կառավարիչներին և զինակիցներին: Նրա կողմից ասված յուրաքանչյուր միտք ունի շատ հստակ նպատակ՝ առաքելության փոխանցումը:

Այստեղ կարելի է սարտրյան մոտեցմամբ ասել, որ այն ինչ մենք սովորում ենք գրականության փորձից, անպայմանորեն կազդի մեր քաղաքական վարքագծի վրա: Այս տեսանկյունից Ալիի նամակը, որը գրվել է Մալիք ալ-Աշթարին նպատակ է ունեցել սահմանել Մալիքի ղեկավարման կարգը:

Ալիի այս նամակն ամբողջությամբ ընթերցելիս ուրվագծվում է Ալիի պատկերացումը կառավարչի մասին և նրան ուղղված Ալիի ուղերձի բովանդակությունը: Փորձենք երկու հատված թարգմանաբար ներկայացնել չորրորդ գլխից.

«Եթե քո ենթականերից մեկը պետք է քեզ կասկածի անարդարության մեջ, բացատրիր նրանց քո արդարացի լինելու հարցում ունեցած հիմնավորումներով: Քո բացատրությունները պետք է ի զորու լինեն հեռացնել քեզնից կասկածները նրանց: Իսկ այդ ընթացքում դու պետք է ինքդ քո հոգու հետ մնաս և ջանքեր թափես, որպեսզի քո ենթականերին բարյացակամությամբ վերաբերես, և ինքդ քեզ կարողամաս այն կերպ արդարացնես, որ քո իսկ պահանջմունքները բավարարվեն. այսինքն դրանք պետք է անպայմանորեն ճշմարտության ճանապարհին արտացոլվեն»[18]:

Հոդվածն ավարտենք նամակն ավարտող մտքի ներկայացմամբ՝

«…Ես խնդրեցի Ալլահին, որ շնորհի ինձ և ձեզ իր անսահման բարեգթությունը, ամեն ցանկության իրականացման համար իր հսկայական ուժը, քանի որ նա միակն է, ով կարող է իրեն ներկայացնել և իր կողմից արարվածներին ապահովել գործողությունների կատարման արդարացիության հիմքերով: Իրեն ծառայողներին նա կարող է գերազանց կերպով մեծարել, երկրի

[18] نهج البلاغة, էջ 518: 2004 ،

համար իր հսկայական ժառանգությամբ, իր ամբողջական ողորմությամբ և բազմապատկված բարեգթությամբ»[19]:

Նամակ-ուղերձը, եթե փորձեինք մեկ նախադասությամբ նկարագրել, ապա կարելի է այն համարել մուսուլմանական ումմայի նորմերի և արժեքների մի ամբողջական համախումբ: Այն քարոզում է հավասարություն, սեր, բարեգթություն, չափավորություն, կառավարիչներին քննադատելու և ներողամտության ազատություններ, միևնույն ժամանակ արգելում է կառավարչին ճնշումներ իրականացնել իր ենթակաների նկատմամբ, իր իշխանությունից մեծամտանալ, զերծ պահել նրանց ոչ արդարացի պատիժների կիրառումից և այլ կարևոր մոտեցումներ, որոնք ներկայացվում են հենց Ալի իբն Աբի Տալիբի խոսքերով, իսկ շիայական ընկալումը հետևյալն է, որ «Իմամի խոսքերն արարչի խոսքերից ցածր են, բայց բարձր բոլոր արարվածներից»[20]:

IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY

Tatevik Mkrtchyan

(Summary)

This article discusses the longest message letter of Imam Ali ibn Abi Talib collected in the Nahğ al- balāġā which is addressed to the governor of Egypt, Malik al-Ashtar. This letter is a very rich text and is considered as one of the best examples of explicit and internal instructions related to early Islamic governance.

The analysis of this text shows the basic discourses, especially of Shia Islamic worldview and knowledge framework in God, the world, just and unjust governance/rulership, piety and self-reflection.

[19] نهج البلاغة ، 2004, էջ 521-522:

[20] Ibn Abī al-Ḥadīd, Sharḥ Nahj al-Balāgha, vol 1, Cairo (1959-1964), p 24. Այս միտքը կարելի է հանդիպել ավելի ուշ շրջանի գրեթե բոլոր մեկնաբանների և հետազոտողների աշխատանքներում: